«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ << ՆԶՊ առարկայի գնահատման համակարգը >>

ԱՌԱՐԿԱ ՆԶՊ

ՀԵՂԻՆԱԿ Մացոյան Ահարոն

ՄԱՐԶ Շիրակ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ <<Հայկավանի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ

ՆԱԽԱԲԱՆ

Կրթության գերակա խնդիրը դպրոցականի անձի զարգացումն է, նրա՝ որպես ուսումնական գործընթացի և ինքնազարգացման սուբյեկտի կայացումը և անհատականության ձևավորումը: **Թեմայի արդիականությունը** կայանում է նրանում, որ սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակի վերահսկմամբ բացահայտվում են դրանց ձևավորվածության մակարդակները և ուսուցման գործընթացում առկա թերությունները, որոնք նրանք ձեռք են բերում ուսումնական աշխատանքների կատարման յուրաքանչյուր փուլում: Այդ տեսանկյունից դպրոցում սովորողների ուսման որակի վերահսկումը, գիտելիքների գնահատումը համարվում է ուսուցման գործընթացի էական բաղադրիչը, որոնցով և բնութագրվում է դպրոցի գործունեության արդյունավետությունը: Այն ենթադրում է ոչ միայն գիտելիքների յուրացման, կարողությունների և հմտությունների ձևավորվածության մակարդակի բացահայտում, այլև ուսումնական գործունեության դրդապատճառների ձևավորում, ինքնավերահսկաման, ինքնգնահատման, ինքնաստուգման կարողությունների զարգացում: Սովորողների ուսումնական հաջողությունները պայմանավորված են նաև աշակերտի ուսումնական դրդապատճառներով, ինքնուրույնությամբ, ակտիվությամբ, որով և պայմանավորված է թեմայի արդիականությունը**:** Ուսուցիչների մանկավարժական գործունեության նպատակը այսօր դառնում է ոչ միայն գիտելիքների հաղորդումը, այլև սովորողների ինքնագործունեության կազմակերպման հմտությունների ձևավորումը, որն իր հերթին ենթադրում է ուսուցչական հսկողության փոխարինումը սովորողների կողմից սեփական գործունեության ինքնահսկմանն ու ինքնակարգավորմանը: Ուսուցման սկզբունքների, տարբեր մեթոդների ու ձևերի կիրառման արդյունավետությունը, դասագրքերի նպատակային օգտագործումը և մեթոդական մշակումների որակը, կրթության բովանդակությունը ուղղակիորեն կապված են այդ հիմնախնդրի լուծման հետ:

Գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակի վերահսկումը, ստուգումը և գնահատումը ուղղված են սովորողների ուսուցման արդյունքի և ուսման որակի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության ստացմանը, որը

վերլուծելով ուսուցիչը անհրաժեշտ շտկումներ է մտցնում ուսումնադաստիարակչական գործընթացի կառավարման մեջ:

Հետազոտության նպատակը՝ Ուսումնասիրել սովորողների գիտելիքների, կարողությունների գնահատման արդի համակարգը, մշակել և առաջադրել մանկավարժական պայմաններ:

Հետազոտության օբյեկտը՝ սովորողների գիտելիքների և կարողությունների գնահատման գործընթացն է:

Հետազոտուտության առարկան՝ սովորողների գիտելիքների և կարողությունների գնահատման մանկավարժական գործունեության համակարգն է:

Հետազոտության խնդիրները՝

- Ուսումնասիրել և վերլուծել սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների, դրանց հաշվառման, ստուգման ու գնահատման ավանդական և ժամանակակից համակարգերը:
- մշակել սովորողների գիտելիքների, կարողությունների գնահատման արդի համակարգի մանկավարժական պայմաններ:

ԳԼՈՒԽ 1
ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ինչ է ուսումնառությանը նպաստող ուսումնառությունը

Մարդկության ձևավորման վաղ ժամանակներից սկսած անձի ինքաճանաչման և ինքնագնահատման, ինքնարժևորման հիմնախնդիրը հուզել է բոլոր մեծ մտածողներին:

Անտիկ ժամանակներից սկսած՝ անձի գնահատման և ինքնարժևորման չափանիշներ են համարվել՝ բարիքը, բարությունը, գեղեցկությունը, արդարությունը, ճշմարտությունը, հավատը, սերը և այլն: Այդ չափանիշները դարձան բարձր արժեքների հետ մարդու հարաբերակցման, դաստիարակության գլխավոր պայման:

Միջին դարերում գնահատումը դիտվում է որպես քրիստոնեական բարոյագիտության ձևավորման չափանիշ, և մարդը գնահատվում էր նրանով, թե որքանով էին նրա արարքները համապատասխանում Բարձրյալի սահմանած օրենքին [3, էջ 15]:

Կարելի է առանձնացնել այդ հիմնախնդրի ուսումնասիրման մի քանի հիմնական ուղղություններ, որոնք առաջ են քաշել մի շարք գիտնականներ: Մեծ խումբ են կազմում այն աշխատանքները, որոնք վերաբերում են ուսուցման ընթացքում գիտելիքների յուրացման որակի վերահսկման ու գնահատման հիմնախնդրին: Այս հիմնախնդրի շուրջ զբաղվել են մի շարք գիտնականներ՝ Ի.Յու.Լերներ, Ա.Բ.Վորոնցով, Ն.Ֆ.Վինոգրադով,

Այս խնդիրը որոշակիորեն լուծել է Վերածնունդի դարաշրջանի մեծագույն մտածողներից մեկը՝ Հովհաննես Սարկավարգ Իմաստասերը, որը փորձը համարեց գիտելիքի աղբյուր, ճանաչողության ձևի և բանական ճշմարտության միակ չափանիշը:

Վերածնունդի դարաշրջանի մեծ մտածողների՝ Հովհաննես Իմաստասերի, Ֆրանսուա Ռաբլերի, Է. Ռոտերդամցու, Մ.Մոնտենի և այլոց աշխատություններում արդեն ներկայացվեցին նոր մոտեցումներ գնահատականի որպես ուսուցման գործընթացի բաղադրիչի մասին [10, էջ42]:

Այդ ժամանակաշրջանում Ռոտերդամցին առաջինն էր,որ խոսեց մանկական տարիքի յուրահատկության մասին՝ շեշտելով, որ տարբեր տարիքի երեխաների գնահատման չափանիշները պետք է տարբեր լինեն, յուրաքանչյուր երեխայի նկատմամբ պետք է անհատական մոտեցում ցուցաբերվի՝ հաշվի առնելով նրա հակումներն ու ընդունակությունները:

Միշել Մոնտենը նույնպես անդրադարձել է սովորողների գնահատման հիմնախնդրին: Նա առաջիներից մեկն էր, որ տեսականորեն հիմնավորեց ուսուցման մեջ սուբյեկտ-սուբյեկտային հարաբերությունները՝ նշելով, որ «Երեխայի հակումների աստիճանին իջնելու և դրանք ղեկավարելու ունակությունը հատուկ է միայն վեհ և ուժեղ հոգուն» և միաժամանակ հավաստելով, որ ուսումնական գործընթացում ուսուցիչը պետք է հանդես գա ուղղորդողի դերում, իսկ աշակերտը պետք է ազատ լինի ճանաչողության ասպարեզում և այդ ազատությունը չպետք է սահմանափակել երեխայի համար տեսանելի շրջանակներով: Նա որպես գնահատման մեթոդ առաջարկում էր համեմատությունը և անհրաժեշտ էր համարում երեխային սովորեցնել գնահատել և՛ իրեն, և ուրիշներիրն. « ճանաչել դիմացինի էությունը՝ գնահատելով յուրաքանչյուրի արժեքներն ու հատկանիշները»: Այսինքն՝ Մ. Մոնտենը ուղենշեց գնահատման համակարգի կարևոր սկզբունքները.

- աշակերտների գիտելիքների համակողմանիությունը,
- երեխայի անձնական շահագրգռության և ակտիվության հաշվառումը նյութի ուսումնասիրման ժամանակ,
- ինքնագնահատման կարողությունների զարգացման մակարդակի հաշվառումը [10, էջ46]:

Սովորողների գնահատման հիմնախնդիրը իր զարգացումն է ապրել 17-րդ դարի չեխ մանկավարժ Յան Ամոս Կոմենսկու աշխատություններում: Նա առաջին էր, որ սովորողների գիտելիքների գնահատումը կապեց կրթության բովանդակության որոշակիության և տարիքային անհատական առանձնահատկությունների հաշվառման հետ և այն համարեց կրթության համակարգի կարևորագույն բաղադրիչ, որի շնորհիվ որոշվում է երեխայի անձի զարգացման դինամիկան [7, էջ42]:

Զարգացնելով Մ. Մոնտենի ու Ժ.Ժ. Ռուսոյի գաղափարները՝ մանկավարժական ախտորոշման՝ որպես ուսուցման գործընթացի որոշիչ հիմքի մասին և

հիմնավորելով երեխաների հոգեբանական առանձնահատկությունների, ինչպես նաև անձի՝ որպես բազում ոլորտներից բաղկացած ամբողջության և մանկավարժական գործընթացի սուբյեկտի ուսումնասիրման անհրաժեշտությունը [10, էջ17]:

Գնահատման առաջին համակարգը ձևավորվել է Գերմանիայում: Այն բաղկացած էր երեք բալից, որոնցից յուրաքանչյուրը նշանակում էր կարգ, որ պիտի դասել տվյալ աշակերտին՝ ըստ նրա առաջադիմության (առաջին կարգ՝ լավագույն, երկրորդը՝ միջին, երրորդը՝ վատագույն): Բալերը ցույց էին տալիս աշակերտի տեղը մյուսների համեմատ: Ժամանակի ընթացքում միջին կարգը, որին պատկանում էր աշակերտների ամենամեծ քանակը, բաժանեցին լրացուցիչ երեք դասերի, որի արդյունքում ստացվեց 5 նիշային սանդղակ, որը և ընդօրինակեցին Ռուսաստանում:

Այստեղ բալերին այլ նշանակություն տվեցին: Դրանք դադարել էին աշակերտներին կարգերը ցույց տալուց. դրանց միջոցով ձգտում էին գնահատել աշակերտների իմացությունը: Ենթադրում են, որ բալերի նկատմամբ նման մոտեցումը ստեղծել է գերմանացի մանկավարժ Բազեդովի սահմանած գնահատման 12 բալյան համակարգի ազդեցությամբ:

Գիտելիքների, կարողությունների, վերահսկողության գործառույթները, ձևերն ու տեսակները:

2008-2009թթ. ուսումնական տարում կրթական բարեփոխումների համատեքստում ՀՀ հանրակրթության համակարգն անցավ գնահատման 10 բալային համակարգի [1, էջ40]:

Գնահատումն ընդհանրապես աշակերտների ուսումնական գործունեության արդյունքների՝ գիտելիքների, կարողությունների, հմտությունների, ակտիվության, ինքնուրույնության, զարգացվածության, վարքի արժևորումն է:Այն ուսուցման գործընթացում վերահսկողությունն իրականացնող կարևոր բաղադրիչ է,որը ապահովում է ուսուցիչ-աշակերտ հետադարձ կապը և հանդես է գալիս որպես ուսումնադաստիարակչական գործընթացի շտկման և կարգավորման միջոց: Վերահսկողությունը ուսուցման գործընթացի պարտադիր բաղադրիչ է, որի միջոցով չափվում են աշակերտի ուսումնական գործընթացի արդյունքները: Այսինքն՝ ուսուցման յուրաքանչյուր փուլի ավարտից հետո հարկավոր է պարզել, թե ինչպիսին են սովորողների ձեռքբերումների արդյունքները, որքանով է հաջողվել լուծել խնդիրները,իրականացնել ուսումնական գործընթացը, ինչ լրացուցիչ քայլերի կարիք կա և այլն:

Այսպիսով, ներկայումս մեր երկրում օգտագործվում է աշակերտների ուսումնական գործունեության արդյունքների գնահատման տասբալյան համակարգը:

Գնահատման խորհրդային համակարգը մինչ հեղափոխականից տարբերվում էր միայն անվանական առումով («1», «2»,, «5» թվանշանների փոխարեն օգտագործվում են «թույլ հաջողություններ», «բավարար», «գերազանց» թվանշանները): Տաս միավորանոց համակարգի հեղինակները առաջարկեցին այն՝ որպես հինգ միավորանոց սանդղակի փոխարինող: Հինգ միավորանոց համակարգը ուղիղ կերպով կողմնորոշված էր աշակերտների՝ ծրագրային նյութի յուրացման որակի ուսումնական ձեռքբերրումների վրա [10, էջ48]:

Տասբալյան համակարգը նաև նախատեսում է ոչ միայն ուսումնական ձեռքբերումների գնահատումը, այլ նաև աշակերտների ճանաչողական ակտիվության, նրանց ունակությունների, կամային որակների ձևավորմանը: Դրա հետ մեկտեղ, և՛ մեկ, և՛ մյուս համակարգում գնահատողի դերում հանդես է գալիս ուսուցիչը, որը համարվում է ոչ չեզոք անձ ուսման արդյունքների նկատմամբ, քանի որ գնահատում է իր աշխատանքի արդյունքը: Այդ պատճառով հինգ միավորանոց և տաս միավորանոց համակարգերի սուբյեկտիվությունը համարվում է դրանց օրգանական հատկությունը:

Հաստատված է, որ գնահատման տասը միավորանոց համակարգը շատ ավելի կատարյալ է, քան մինչ այդ գործող հինգ միավորանոց համակարգը: Դրա առավելություններից մեկը կայանում է նրանում, որ այն թույլ է տալիս ուսուցչին մեծ օբյեկտիվությամբ գնահատել իր դասարանի աշակերտների պատրաստվածության որակը: Տասը միավորանոց համակարգի ներդրումը, անկասկած, կարևոր քայլ է դպրոցական կրթության կատարելագործման մեջ: Գնահատման տասը միավորանոց համակարգը զերծ չէ որոշ թերություններից, որոնք բնութագրական էին հինգ միավորանոց համակարգին: Դա այն բանի հետևանքն է, որ այդ երկու համակարգերն էլ կիրառում են գնահատման կարգային սանդղակը:

Կարգային սանդղակը թույլ է տալիս համեմատել ուսուցման որակը: 10 միավոր թվանշանը համապատասխանում է աշակերտի պատրաստվածության ավելի բարձր մակարդակին, քան 9 միավորը: Սակայն դա միայն պայմանականություն է:

Որոշ գնահատման համակարգերում օգտագործվում են ոչ թե թվեր, այլ տառեր: Եթե տասը միավորանոց համակարգում 10-ը փոխարինենք Ա տառով, 9-ը՝ Բ-ով և այսպես շարունակ, ապա ըստ էության կմնա նույն տասը միավորանոց համակարգը, որը կար [11, էջ 13]:

Աշակերտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակի վերահսկումը, ստուգումն ու գնահատումը ուսումնական գործընթացի անհրաժեշտ մաս են կազմում, որը կատարելագործման կարիք է զգում, քանի որ ինչպես ցանկացած համակարգ, այնպես էլ գնահատման համակարգը ենթակա է զարգացման: Զարգացումը բերեց գնահատման ժամանակակից մեթոդների

ձևավորման, որոնք ավանդական մեթոդների հետ համեմատած ունեն որոշակի տարբերություններ:

Առանց գնահատականների ուսուցման գաղափարը բազմիցս քննարկվել է մանկավարժական մամուլում և հասարակական մեծ արձագանք է գտել 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին: Արդեն այդ ժամանակ առանձին ուսուցիչներ և ուսումնական հաստատություններ հրաժարվում էին գնահատականներից և անցնում ուսման որակի վերահսկողության ուրիշ ձևերի:

Մանկավարժներից շատերը կասկածանքի տակ են դնում գնահատման ժամանակակից միավորային համակարգը, կարծիքներ են հայտնում նրա կատարելագործման կամ նույնիսկ նրա փոխման մասին, [1, էջ2]: Մեր կողմից իրականացված մանկավարժական փորձը, կատարած դիտարկումները հանգեցրել են ուսուցման հետ կապված մի շարք հիմնախնդիրների, այդ իսկ պատճառով մենք առաջարկում ենք մեր տարբերակը վերոհիշյալ խնդրի լուծման համար:

Գնահատականը խթան է, որպեսզի աշակերտը առավել կայուն ու խորը գիտելիքներ ձեռք բերի, առաջացնի առողջ մրցակցություն :

Ուսումնական արդյունքների մակարդակի բարձրացման արդյունավետ միջոցներից մեկը գնահատումն է: Ձևավորվող գնահատումը ուսուցման գնահատումն է:

Որպես գնահատական կարող է հանդես գալ ուսուցչի դիմախաղը, ժեստերը, խոսքը և այլն: Թվանշանը գնահատականի հստակ արտահայտությունն է:

Բանավոր և գրավոր հարցումների գնահատման չափանիշներ կազմելիս հաշվի են առնվում գնահատման նպատակը, առաջադրանքի տեսակը, բովանդակությունը, դրա կատարման համար գնահատվողից ակնկալվող պատրաստվածությունը և հետևյալ սանդղակը.

միավոր	անվանում
10	բացառիկ
9	գերազանց
8	Շատ լավ
7	լավ
6	Միջինից բարձր
5	միջին
4	բավարար

3	անբավարար
2	վատ
1	Շատ վատ

Դրական են համարվում 4-10 միավորները:

Գնահատման 10 - միավորային համակարգը որոշակիացվում է առարկայական չափորոշիչներում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի, ուսումնական նյութի գնահատման ձևի առանձնահատկությունները և ստուգման նպատակները:

Սակայն հաճախ բացի թվանշանից ուսուցիչը կիրառում է խոսքային լրացումները՝ «շա՛տ լավ է», «ապրե՛ս», «կարող էիր ավելի լավ պատասխանել», «այսօր լավ չես աշխատում» և այլն: Գնահատման միջոց է նաև, օրագրում աշակերտի ստացած թվանշանի, հաճախ նաև ՝ ծնողներին ուղղված երկտողը:

Գնահատման սկզբունքներն են արդարությունը, օբյեկտիվությունը, հուսալիությունը, անկողմնակալությունը, հավաստիությունը, հիմնավորվածությունը, մատչելիությունը, թափանցիկությունը և այլն: Բացի նշված համակարգից կիրառվում են նաև գնահատման որակական եղանակներ՝ բնութագրային և ստուգարքային [6, էջ12]:

Բոլոր ժամանակներում մանկավարժ գիտնականները փորձել են որոնել թվանշաններով գնահատման ուղիներ. բալային ոչ մի համակարգ չի կարող ստույգ արտահայտել աշակերտի ուսումնական գործունեության արդյունքների չափը, խորությունը, մակարդակը: Գնահատականը երբեմն կատարում է կարգապահության ամրապնդման, ինչպես նաև պատժի գործառույթ:

Այսօր դեռևս բավարար չափով մշակված չեն սովորողների բարոյական որակների, վարքագծի, արժեհամակարգի գնահատման ձևերն ու գործիքները, որոնք դեռևս տրամաբանական ամբողջականություն ներկայացնող ավարտուն տեխնոլոգիաներ չեն, այլ միայն գնահատման առանձին եղանակների հանրագումար՝ մասնավորապես նիշային:

Այսպիսով՝ երեխան դպրոցում սովորում է գնահատել ոչ միայն իր ունակությունները, կարողություններն ու գիտելիքները, այլ նաև տարբեր իրադրություններ:

Արդի հանրակրթության գործընթացում կիրառվում են գնահատման նոր՝ աշակերտակենտրոն ձևեր, եղանակներ, որոնցից բավականաչափ արդյունավետ

են ռուբրիկները (սանդղակ, սանդղակաշար): Ռուբրիկը հստակ սահմանում է սովորողի ուսումնական արդյունքների գնահատման չափանիշները: Այն կարող է կազմվել սովորողների խմբային, անհատական, ընդհանուր աշխատանքները ստուգելու և գնահատելու համար՝ բնութագրելով աշակերտների մասնակցությունը, նյութի իմացությունը, ինքնուրույնությունը, ակտիվությունը, կարգապահությունը, մտքի ճկունությունը և այլն [9, էջ46]:

Ռուբրիկը կազմելիս որոշվում է, թե տվյալ միավորը գնահատման համակարգի ո՛ր աստիճանին է համապատասխանում: Ռուբրիկն ուսուցչին հնարավորություն է տալիս արդարացի և օբյեկտիվ լինել, իսկ աշակերտին՝ հստակ պատկերացնել, թե իր աշխատանքի, ո՛ր բաժինն է գնահատվում, ի՛նչ կարողություններ են պահանջվում որոշակի գործունեության իրականացման համար:

Սանդղակները կամ ռուբրիկները գնահատման գործիքներ են, որոնք սահմանում են աշակերտի յուրացրած գիտելիքի, կատարած աշխատանքի, դրսևորած կարողությունների և հմտությունների, առհասարակ արդյունքների գնահատման չափանիշները:

Ռուբրիկը սանդղակ է, որտեղ գնահատման յուրաքանչյուր միավորի համար սահմանված են պահանջները բնութագրող հստակ չափանիշներ: Այսինքն՝ ռուբրիկը ձեռքբերման մակարդակի, ցանկալի արդյունքի նախագծումն է, դասի պարտադիր բաղադրիչը՝ կողմնորոշիչը: Ոչ միայն ուսուցիչը, այլև աշակերտները կարող են որոշել տվյալ մակարդակի համար սահմանվող չափանիշն ու միավորը:

Գնահատելիս մանկավարժը պետք է կանխատեսի այդ գործընթացի դրական և բացասական հետևանքները, դաստիարակչական արդյունքը, յուրաքանչյուր աշակերտի վրա թողած վալեոլոգիական և սոցիալ-հոգեբանական ներգործությունը: Սա նշանակում է,որ գնահատման գործընթացում տարրական դպրոցի ուսուցչից պահանջվում են ոչ միայն գիտելիքներ, այլ նաև՝ վարպետություն. տարրական դպրոցի սովորողները տարիքային այն փուլում են, երբ նրանց աշխատանքի գնահատականը անհրաժեշտ է կիրառել զգուշորեն և չչարաշահել այն: Կարևորում ենք նշել, որ ուսուցչի գնահատականի հետ մեկտեղ անհրաժեշտ է կիրառել նաև աշակերտի ինքնագնահատման հնարը:

Գնահատականը՝ որպես մարդասիրական անձնակողմնորոշիչ ուսուցման կարևոր բաղադրիչ, դիտարկվում է որպես մանկավարժական գործընթացի սուբյեկտների երկխոսություն, որի հիմքը անձի ճանաչողական

պահանջմունքների բավարարման գործընթացն ու արդյունքն է և մարդու ընդհանուր զարգացումը: Մանկավարժական գործընթացի կարևորագույն բաղադրիչ է դառնում ուսուցչի և աշակերտների անձնակողմնորոշված համագործակցությունը, առանձնահատուկ դեր է հատկացվում մարդու հոգևոր դաստիարակությանը, անձի կայացմանը [9 էջ32]:

Այս գործընթացում կարևոր է աշակերտների ճանաչողական գործունեության ակտիվացումը, նոր հնարների, մեթոդների կիրառումը՝ գիտելիքների գիտակցական և առավելագույն յուրացման համար [9, էջ42]:

Առաջին գլխի ուսումնասիրության արդյունքում առաջարկում ենք միջին և ավագ դպրոցականի գնահատման հիմնական հայտորոշիչ համակարգ, որը ներկայացրել ենք գունային լուծման եղանակով՝ մեր կողմից մշակված առաջադիմության քարտերի տեսքով: Դրանց վրա ընդարձակածավալ ներկայացված են այն բնութագրիչները, որոնք արտացոլում են աշակերտի՝ հիմնական հատկանիշները.

1	ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ
2	ԲԱՐԵԽՂՃՈՒԹՅՈՒՆ,ԻՄԱՑԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՁԳՏՈՒՄ
3	ՏԵՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆ
4	ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
5	ՏԱՐԱԲՆՈՒՅԹ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԾԱՎԱԼԵԼՈՒ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
6	ՀԱՆՁՆԱՐԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԱԳՈՒԹՅՈՒՆ
7	ԲԱՐԵԿԻՐԹ ՎԱՐՎԵԼԱՁԵՎԻ ՓՈԽՕԳՆՈՒԹՅԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
8	ՍՏԱՆՁՆԱԾ ԳՈՐԾԻ ՀԱՆԴԵՊ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ
9	ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԴՐՍԵՎՈՐԱԾ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

10	ՀՈԳԵԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Նշված բնութագրիչներն ընտրված են որպես մշակված, ժամանակի և փորձառության բովով անցած, հղկված և սոցիալական նշանակություն ունեցող վարքի և գործունեության գնահատման չափանիշներ: Սրանցից յուրաքանչյուրը բնութագրում է անձի գործունեության որոշակի ոլորտները: Հատկանիշների առանձնացումն իրականացվել է մանկավարժական գրականության վերլուծության, ծնողների և աշակերտների միջավայրում իրականացրած անկետայի հարցման, ուսուցիչների և աշակերտների հետ անցկացրած զրույցների, դիտումների, փորձարարական գնահատումների հիման վրա:

Մեր կողմից մշակվել է գնահատման հայտորոշիչ համակարգ, որը կարող է դառնալ ուսուցանող գնահատման այլընտրանքային տարբերակ,որի կիրառման շնորհիվ պարբերաբար կարձանագրվեն աշակերտի անձի զարգացման գործընթացի մշտադիտարկման տվյալները՝ ակնառու ձևով արտահայտելով անձի համար տվյալ պահին էական և արդիական խնդիրները:

ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ

2.1.Հետազոտության նախապատրաստում և իրականացում:

Սովորողների գիտելիքների կարողությունների գնահատման արդի համակարգի կիրառման արդյունավետությունը գնահատելու նպատակով մեր կողմից իրականացվել է հետազոտական աշխատանք:

Հետազոտության ընթացքը՝

Հետազոտությունն իրականացրել ենք դպրոցում

Հետազոտական աշխատանքին ներգրաված են եղել՝

- **9-րդ դասարանի 11 աշակերտ,**

Հետազոտության մեթոդները՝

1.Զրույց

2.Հարցաթերթիկային հարցման մեթոդ

3. հետազոտության արդյունքների վերլուծման մաթեմատիկական հաշվարկման և վերլուծման մեթոդներ:

2.2 Հետազոտության տվյալների վերլուծություն

Զրույցի միջոցով հետազոտություն ենք իրականացրել 9-րդ դասարանի 11 աշակերտի շրջանում:

Մեր նպատակն է եղել պարզելու կրտսեր դպրոցականների կարծիքը գնահատման արդի համակարգի վերաբերյալ:

Առաջադրվել են հետևյալ հարցերը՝

- **Ի՞նչ գնահատման համակարգ է ձեր դպրոցում:**

- **Հիմնականում ի՞նչ գնահատական եք ստանում:**
- **Ի՞նչ ազդեցություն է թողնում գնահատումը ձեր տրամադրության վրա:**
- **Ինչպե՞ս են վերաբերում ձեր ծնողները, երբ ստանում եք բարձր կամ ցածր գանահատական:**
- **Գո՞հ եք արդյոք ձեր ուսուցիչների գնահատումից:**

Աշակերտների հետ զրույցից պարզ դարձավ, որ տարրական դասարաններում շատ հաճախ գնահատականը բացասաբար է անդրադառնում դպրոցականների փոխհարաբերությունների վրա՝ նրանց բաժանելով լավ և վատ սովորողների: Աշակերտներից 7-ը նշեցին, որ շատ հաճախ գնահատականը բացասական դեր է կատարում՝ իրենց մեջ առաջացնելով խուճապային տրամադրություն, կասկածամտություն իրենց ունակությունների, կարողությունների հմտությունների նկատմամբ: Ընդահանրապես գնահատումը խթան պետք է հանդիսանա՝ դրական հուզմունք և լիցքեր հաղորդի ավելի խորը գիտելիքներ ձեռք բերելու առումով:

Հարցմանը մասնակցած աշակերտներից 3-ը նշեցին, որ գնահատականը մրցակցություն է առաջացնում իրենց միջև, բարձր գնահատականը ոգևորում և մոտիվացիա է առաջացնում ուսման նկատմամբ: Նրանք նշեցին, որ ձգտում են բարձր գնահատականներ ստանալ, քանի որ ծնողներից սպասելիքներ ունեն: Աշակերտներից 1-ը նշեց, որ երբեմն ցածր գնահատականը բացասաբար է ազդում ծնող-երեխա փոխհարաբերության վրա:

Եզրակացություն

- Մեր հետազոտությունների ընթացքում պարզեցինք, որ գնահատման տասը միավորանոց համակարգը շատ ավելի կատարյալ է, քան մինչ այդ գործող հինգ միավորանոց համակարգը: Դրա առավելություններից մեկը կայանում է նրանում, որ այն թույլ է տալիս ուսուցչին մեծ օբյեկտիվությամբ գնահատել իր դասարանի աշակերտների պատրաստվածության որակը: Տասը միավորանոց համակարգի ներդրումը, անկասկած, կարևոր քայլ է դպրոցական կրթության կատարելագործման մեջ:
- Նիշային գնահատումը խթան է, որպեսզի աշակերտը առավել կայուն և խորը գիտելիքներ ձեռք բերի, առաջացնի առողջ մրցակցություն: Ուսուցիչների կարծիքով նիշային գնահատումը ձևավորում է անձնային որակներ, այն օգնում է դպրոցականի մոտ ձևավորել ինքնագնահատականը, սովորեցնում է մրցունակ լինել, ցածր գնահատական ստանալով սովորում է կրել պարտությունը արժանապատվորեն:
- Գնահատման արդյունավետությունը կարելի է ապահովել միայն մանկավարժական հետևյալ պայմանների առկայությամբ՝
    - համակարգվածություն,
    - համալիր ամբողջություն,
    - բազմագործոնային բնույթ,
    - մարդասիրական ուղղվածություն,
    - առարկայական և թեմատիկ նյութի ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպում:

Մեր կողմից առաջադրված գնահատման արդի համակարգի կիրառման մանկավարժական պայմաններն են՝

- Միջին և ավագ դպրոցում գնահատման գոյություն ունեցող համակարգը կատարելագործելու նպատակով՝ թվանշանային գնահատականների հետ միասին առաջարկում ենք դասամատյանում կամ հատուկ տետրի մեջ գրանցել լրացուցիչ տեղեկություններ աշակերտի առաջադիմության, տվյալ առարկայի գծով նրա պատրաստության, պատասխանների սխալների և անճշտությունների, անհատական առանձնահատկությունների մասին: Այն հնարավորություն կտա ուսուցչին կենսագործելու աշակերտների նկատմամբ տարբերակված մոտեցում:
- ինքնագնահատման և համադասարանցիների գնահատման ընթացքում, գնահատման գործընթացում ակտիվ երկխոսության կրիառում,
- դպրոց – ընտանիք կապի ապահովում և ամրապնդում,դասարանում գնահատման համակարգի առողջ բարոյահոգեբանական և հումանիստական հարաբերությունների ձևավորման նպատակով մանկավարժական աջակցության ցուցաբերում,
  - գնահատման միջոցով աշակերտի մոտ ուսումնական մոտիվացիայի ձևավորում,
  - աշակերտի գնահատականի գիտակցման համար հանձնարարությունների մշակում և իրականացում :

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Ասատրյան Զ.Ա., «Տարրական կրթության մանկավարժություն» ուսումնամեթոդական ձեռնարկ (դասախոսությունների ժողովածու), Եր.: Տիգրան Մեծ, 2017թ.:
- Հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների ընթացիկ գնահատման մեթոդաբանություն, Երևան, 2008:
- Հայաստանի հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N 439-Ն որոշման նախագիծ:
- Հանրակրթության Պետական Կրթակարգ, Միջնակարգ Կրթության Պետական Չափորոշիչ, Երևան, 2004:
- Հակոբյան Ա.Ա., Մանկավարժական գործունեության հիմունքներ, ուսումնամեթոդական ձեռնարկ, «Էդիթ Պրինտ» հրատարակչություն, Երևան 2017թ.:
- Հակոբյան Գ.Հ., Մանկավարժական պրակտիկայի ուղեցույց: Մեթոդական ձեռնարկ, Եր.: Արտագերս, 2017թ.:
- Հակոբյան Ն. և ուրիշներ, Մանկավարժական հաղորդակցում, Երևան, 2010թ.:
- Ղույումչյան Գ.Ե., «Մանկավարժություն», գիրք 1-ին, էջ 14, Երևան, 2005թ.:
- Վարդումյան Ս. և ուրիշներ, Ժամանակակից Մանկավարժական Մոտեցումներ. Տեսություններ, Մեթոդներ, Գնահատում, «Նոյյան տապան», Երևան, 2005,
- Միքայելյան Ս., ընթացիկ գնահատման նոր համակարգը որպես կրթության որակի բարելավման խթան, Երևան, 2010
- Վարդումյան Ս., Հարությունյան Լ., Ջաղինյան Ն., Վարելլա Գ., Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ: Տեսություն, մեթոդներ, գնահատում, ձեռնարկ մանկավարժների և ուսանողների համար, Երևան, «Նոյյան տապան», 2003, 404 էջ:
- Айнштейн В.Г., Гольцова И.Г. Об адекватности экзаменационных оценок // Высшее образование в России. №3, 2003

- Куклин В. Ж., Мешалкин В. И., Наводнов В. Г., Савельев Б. А., О технологии оценки качества знаний // Высшее образование в России. №3, 2003
- Садовничий В. А., Компьютерная система проверки знаний студентов//Высшее образование в России. №3, 2004